

Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջան, Միկոյան փողոց 9/3
հասցում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր

Պատվիրատու՝

<<Վելլի բեյ>> ՍՊԸ

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Ա.Մինասյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
Ձեռնարկողի մասին տեղեկություն	3
1.2 Ձեռնարկող	3
1.1 Հապավումներ	3
1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	4
1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը	7
1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր	7
Էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ	10
1.3.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը	11
1.3.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում	17
1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ	17
1.3.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ	18
1.3.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա	21
1.3.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	23
2. ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	26
2.1 ՖԻԶԻԿԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	26
2.2 ԿԼԻՄԱՆ	29
2.3 Օդային ավազան	32
2.4 Ջրային ռեսուրսներ	34
2.5 Հողերի նկարագիրը	35
2.6 Հիմնային աշխատանքներ	35
2.7 Կենսաբազմազանություն	36
2.8 Թափոնների կառավարում	37
3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	39
3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	39
3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	40
3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	40
3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ	40
3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	41
3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	41
3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	43
3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ	45
4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	46
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	47
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	50
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	52
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	53

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկողի մասին տեղեկություն

- | | |
|---|-----------------------------------|
| 1.2 Ձեռնարկող՝ | <<Վելլի Բեյ>> ՍՊԸ |
| 1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ | ք.Երևան, Միկոյան 9/3 |
| 1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ | ք.Երևան, Միկոյան 9/3 |
| 1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ | ք. Երևան, Նոր Նորք վարչական շրջան |

1.1 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Բազմաբնակարան բնակելի շենքի նախագիծը նախատեսվում է իրականացնել Նոր Նորք վարչական շրջան, Միկոյան փողոց 9/3 հասցում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բնակելի համալիր:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բնակելի համալիրի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ.),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ.),
8. <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ.),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ

(կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,

13. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեւերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներ-մուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

16. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (ՀՕ-26, 11.11.1998 թ.);

17. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-52, 03.04.2000թ.),

18. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-22, 23.11.1999թ.),

19. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումը (N71-Ն, 29.01.2010թ.),

20. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումը (N72-Ն, 29.01.2010թ.),

21. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Բազմաֆունկցիոնալ բնակելի թաղամասի նախագիծը մշակված է Երևանի քաղաքապետի կողմից 29.04.2022թ. տրված №07/18-07/2-40120-318 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի) հիման վրա, 29 նոյեմբերի 2021թ. տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման № 29112021-01-0413 վկայականով «ՎԵԼԼԻ ԲԵՅ» ՍՊԸ-ին պատկանող հողամասի սահմաններում:

Հողամասը գտնվում է Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Ա. Միկոյան փողոցի 9/3 հասցեում: Հողամասի մակերեսը **3,683053** հա է: Ռելիեֆի անկման նիշերի տարբերությունը կազմում է՝ առավելագույնը **30.9** մ: Ըստ երկրաբանական տվյալների գրունտը սահմանվել է **2-րդ** կարգի: Կառուցապատման մակերեսը **9 979** քմ է, որը կազմում է հողամասի **27,09 %**-ը:

Կանաչապատման (ջրանցիկ տարածքի) մակերեսը **14 858** քմ է, որը կազմում է հողամասի **40,31 %**-ը:

Շինությունների ընդհանուր վերգետնյա հատվածի մակերեսը **58 902.1** քմ է,

Կառուցապատման խտության գործակիցը՝ **1,5993**:

Վերգետնյա երթևեկելի հատվածը՝ **6 446** քմ, հողամասի **17,5 %**-ը:

Բարեկարգման ընդհանուր մակերեսը.

Բացօթյա հանգստի և խաղերի հարթակներ, մայրեր, կայանատեղեր, սավառակներ, հետիոտն անցուղիներ՝ **5 547,53** քմ, հողամասի **15,1 %**-ը:

Ըստ նախագծի, տարածքում նախատեսվում է իրականացնել **5** բազմահարկ, նմանատիպ **16** հարկանի, միասեկցիոն (Մասնաշենքեր՝ **2, 4, 6, 9, 10**),

1 բազմասեկցիոն առավելագույնը **13** հարկանի (Մասնաշենք՝ **11**) բնակելի շենքեր,

2 խանութ (Մասնաշենքեր՝ **3, 5**),

1 մարզասրահ (Մասնաշենք **12**),

1 ստորգետնյա կայանատեղեր (Մասնաշենքեր՝ **1, 3*, 5*, 7, 8**), (* - վերգետնյա հատվածում խանութներ):

Ստորգետնյա կայանատեղերի մուտքերի և ելքերի քանակը՝ **4**, վերգետնյա՝ **3**:

Երկու թաղամասերը սպասարկող տրանսֆորմատորային էլ. ենթակայան: Բնակելի շենքերի առաջին հարկերում նախատեսված են կոմերցիոն տարածքներ: Կոմերցիոն տարածքների ընդհանուր մակերեսներն ըստ մասնաշենքերի.

Մասնաշենքեր **2, 4, 6, 9, 10**, յուրաքանչյուրում **445** քմ՝ ընդամենը **2 225** քմ:

Մասնաշենքեր **3, 5**, յուրաքանչյուրում **456** քմ՝ ընդամենը **912** քմ:

Մասնաշենք **11**՝ **2 320** քմ:

Կոմերցիոն տարածքների ընդհանուր մակերեսը՝ **5 457** քմ:

Բնակարանների և կոմերցիոն տարածքների ջեռուցումը նախատեսվում է իրականացնել անհատական կաթսաների միջոցով:

Կաթսայատունը նախատեսված է մարզասրահի (մասնաշենք **12**) սպասարկման համար՝ **1** Սվտ հզորությամբ, տեղակայված է հողամասի հարավային սահմանի մոտ

(զվի. հատակագիծ՝ էջեր 3,4, 22), բնակելի շենքերի նկատմամբ հողմհակառակ կողմից՝ ՄՆ 245 սանիտարական նորմերի դրույթներին համապատասխան, մոտակա բնակելի շենքից 32,3 մ հեռավորության վրա:

Ծխատարի բարձրությունը 4,2 մ՝ կաթսայատան տանիքի պիպի նիշից (СП 42-101-2003, Г.17 կետ):

Բնակարանների ջեռուցումը նախատեսվում է իրականացնել անհատական կաթսաներով:

Մարգասրահ (Մասնաշենք 12).

Կառուցապատման մակերեսը կազմում է **1 525** քմ, հարկայնությունը 4 վերգետնյա, 1 ստորգետնյա: Լողավազանների ծավալը 0,000 նիշում՝ **620** խմ, տանիքում **98.5** խմ: Մարգասրահում (մասնաշենք 12) նախատեսվում է 2 լողավազան՝ 77մ² և 337մ² մակերեսներով: Ջրի մաքրման հաճախականությունը՝ 5 ժամում 1 շրջադարձային պտույտով, ֆիլտրացիոն համակարգով և ռոբոտ փոշեկուլով: Օգտագործվող նյութեր՝ քլոր, ալգիցիդ և ֆլուկուլյանտ: Ջրահեռացումը կատարվում է ինքնահոս եղանակով դեպի կոյուղու բակային ցանց:

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը նախատեսված է միացնել նախագծվող թաղամասի արտաքին ցանցին: Լողավազանների ջրի մաքրումն իրականացվում է ՀՍ ԵՆ 15077-2015 պահանջներին համապատասխան: Տանիքում նախատեսվում են ջրատաքացուցիչներ և արևային մարտկոցներ (պահանջվող էլեկտրականության քանակը՝ **800** ԿՎԱ): Կաթսայատան գազի ծախսն ընդունված է

120 նիսմ/ժ, ջրային կաթսաի ջերմային հզորությունը՝ **1000** կվտ:

Արևային պանելները նախատեսվում է տեղադրել մարգասրահի (մասնաշենք 12Ա) հարթ տանիքին: Քանակը 32 հատ, հզորությունը՝ 15 Կվտ:

Բնակարանների թվաքանակը

Մասնաշենքեր 2, 4, 6, 9, 10, յուրաքանչյուրում **69**՝ ընդամենը **345**,

Մասնաշենք 11՝ **238**:

Ընդհանուր բնակարանների թվաքանակը՝ **583**,

Մասնաշենք 11-ի ստորգետնյա հատվածում տեղակայված են ավտոկայանատեղեր՝ յուրաքանչյուր հարկաբաժնին առանձնացված երթևեկելի մոտեցմամբ:

Ավտոկայանատեղերի քանակը՝

Մասնաշենքեր՝ 1, 3*, 5*, 7, 8 ստորգետնյա հատված **89**,

Մասնաշենք՝ 11 կիսանկուղային և նկուղային հարկեր **194**,

Վերգետնյա կայանատեղեր **253**:

Ընդհանուր ավտոկայանատեղերի քանակը՝ **536**, բնակարանների թվի **92 %**-ը:

ՏԵԽՆԻԿԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ՝

Հողի ընդհանուր մակերես՝ **36830,53** քմ;

Կառուցապատման մակերես **9979** քմ;

Կանաչապատման մակերես՝ **14858** ք.մ.;

Մայթ, ճանապարհ, ճեմուղի)՝ **11993.53** ք.մ.;

Բնակարանների քանակ՝ **583** հատ;

Ավտոկայանատեղերի քանակ՝ **536** հատ:

- Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի,

- գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման համար:
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Բազմաֆունկցիոնալ շենքի բնակելի մասի խոհանոցներից, ս/հանգույցներից և լողասենյակներից օդափոխությունը նախատեսված է բնական՝ օդատարերով, որոնք բարձրանում են հորանի մեջ:

Օդատարերի վրա յուրաքանչյուր հարկի առաստաղի տակ նախատեսված է կարգավորիչ ճաղավանդակ:

Ավտոկայանատեղում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկի առաստաղի տակ:

Օդափոխության համար օգտագործվել են կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել նույն պարամետրերով այլ համակարգերով:

Ներածումը և արտածումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

Հասարակական հարկի ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագծումը կկատարվի ճարտարապետական լուծումներից հետո:

Շենքի բնակելի մասի միջանցքներից և ավտոկայանատեղերից իրականացվում է ծխահեռացում:

Ծխահեռացման օդամուղերը տեղակայված են տանիքի վրա:

Հրդեհի ժամանակ վերելակների հորաններում և ավտոկայանատեղի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում նախատեսված են դիմհարման համակարգեր:

Հակահրդեհային օդամուղների գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակալենտրոնական վահանակից: Ավտոկայանատեղերում նախատեսված է ներածման և արտածման մեխանիկական համակարգեր: Արտածման համակարգերը համակցված են ծխահեռացման համակարգերի հետ: Ստորգետնյա ավտոկայանատեղերում յուրաքանչյուր հարկի համար օդափոխման համակարգը առանձին է: Օդափոխությունը իրականացված է վնասակար գազարտանետումների նոսրացման և հեռացման համար:

Բնակարաններում օդի արտածումը իրականացվում է սանհանգույցներից և խոհանոցներից իսկ ներածումը իրականացվում է պատուհանների միջոցով: Սանհանգույցներում նախատեսված են առանցքային օդամղիչներ: Խոհանոցներում նախատեսված են օդահեռացման երկու առանձին համակարգեր, մեկը՝ բնական, մյուսը՝ մեխանիկական, որը միանում է գազօջախի վրա տեղակայված քարշիչ պահարանին:

Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ

Համալիրի Էներգաարդյունավետությունը նախատեսվում է համաձայն գործող նորմերի, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են օդափոխվող երեսպատման համակարգը, բարձր Էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:

Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտահանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են 60% ջերմության խնայողություն:

1.3.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Տեղամասի երկրաբանական կտրվածքը ներկայացված է հետևյալ ինժեներաերկրաբանական էլեմենտներով՝ (վերնից-ներքև)։

- Շերտ-1** Բուսահող մուգ շագանակագույն, խճի ու խճավազի 15-35% պարունակությամբ, կավավազային կազմի, թույլ խոնավ։ Շերտն ունի լայն տարածում և 0,1-0,4 մետր հզորություն։
Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն II կարգ է։
- Շերտ-2** Սպիտակահողեր (կարբոնատային շերտ) դեղնասպիտակագույն, սակավ խոնավ, փխրուն և տեղ-տեղ ցեմենտացած, ավազների, փոշու և խճաքարի տեսքով, հազվադեպ բազալտի խճի ու խճավազի պարունակությամբ։ Ունի լայն տարածում։ Շերտի հորատված հզորությունը 0,6-7,5 մետր է։ Ժամանակակից էյուվիալ առաջացումներ են։
Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն III կարգ է (պայմանական)։
- Շերտ-3** Բեկորային, մանրաբեկորային գրունտ, խճով ու խճավազով, կավավազային լցոնի 10-20%, տեղ-տեղ 25-30% պարունակությամբ։ Բեկորները բազալտային կազմի են, իսկ լցոնը՝ բաց շագանակագույն, սակավ խոնավ և պինդ թանձրության։ Շերտն ունի լայն տարածում և 1,0-4,5 մետր հզորություն։ Ժամանակակից էյուվիալ-դեյուվիալ առաջացումներ են։
Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն V կարգ է։
- Շերտ-4** Բազալտներ մոխրագույն, թույլ ծակոտկեն, հոծ, տեղ-տեղ խոռոչավոր ու խարամված, բեկորային անջատումներով, մասամբ խճայնացված և ճաքճքված։ Շերտի հորատված առավելագույն հզորությունը 12,8 մետր է։ Շերտն ունի լայն տարածում։ Նեոգենի ժամանակա-շրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային ապարներ են։
Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն VII կարգ է։

- Շերտ-5 Խարամներ մոխրագույն և կարմրավուն ծակոտկեն և խոռոչավոր, ավազային և խճային կառուցվածքի, տեղ-տեղ խարամված բազալտների մանրաբեկորների ու խճի պարունակությամբ: Շերտն ունի լայնակի տարածում: Հորատված հզորությունը 1,2-13,4 մետր է: Նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային ապարներ են:
- Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն III կարգ է:
- Շերտ-6 Կավավազներ բաց շագանակագույն և բաց դեղնագույն, սակավ խոնավ, ճալքաքարի ու կոպիճի, մասամբ խճի ու խճավազի պարունակությամբ մինչև 10-30%: Շերտն ունի մասնակի տարածում: Հորատված հզորությունը 0,7-10,9 մետր է: Նեոգենի ժամանակաշրջանի, միոցեն դարակարգի լճային նստվածքներն են:
- Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն II կարգ է:
- Շերտ-7 Ճալքաքարակոպճային գրունտ հազվադեպ գլաքարերով, խիտ կազմվածքի, տեղ-տեղ ցեմենտացած, կոնգլոմերատների մանրաբեկորներով, կավավազների մինչև 10-20%, մասամբ 25-30% պարունակությամբ: Բեկորային նյութը տարակազմ է, լավ և միջին հղկվածության: Գրունտը սակավ խոնավ է: Շերտն ունի մասնակի տարածում, իսկ հորատված առավելագույն հզորությունը 14,0 մետր է: Նեոգենի ժամանակաշրջանի, միոցեն դարակարգի լճային նստվածքներն են:
- Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն III կարգ է:
- Շերտ-8 Կոնգլոմերատներ թույլ ամրության, մանրաբեկորների ու խճի տեսքով, տեղ-տեղ վատ ցեմենտացված: Շերտն ունի մասնակի տարածում, իսկ հորատված առավելագույն հզորությունը 1,6 մետր է: Պալեոգենի ժամանակաշրջանի, օլիգոցեն դարակարգի լճային նստվածքներն են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն V կարգ է:






Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց


Շինարարության նորմատիվ տնտղությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետև հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տնտղությունը ծրագրվում է 74,0 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

ՇՐԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՍՏԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ 1-ԻՆ ՓՈՒԽ ՀԱՄԱՐ



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇՐԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՆՈԼՈԳԻԱԿԱՆ – 35 ԱՄԻՍ

ՇՐԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՍՏԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ 2-ԻՆ ՓՈՒԽ ՀԱՄԱՐ



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇՐԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՆՈԼՈԳԻԱԿԱՆ – 39 ԱՄԻՍ

Ստորագրող	Ստորագրող	Ստորագրող	Ստորագրող
ԼՍԸ	ԼՍԸ	ԼՍԸ	ԼՍԸ
Պատվիրատու «ՍՏՆԻ ՓԲԸ»			ՊՏԸ ԱՆ.
			ՊՏԸ ԱՆ.

1.3.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռուցիկ գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայրերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.3.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

1.3.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 150 մարդ, որից

Ինժինեռատեխնիկական անձնակազմ - 8 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	KOMATSU PC 400-7	2
2	Բուլդոզեր	KOMATSU D37-EX-22	1
3	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	2
4	վերամբարձ ավտոկրունկ	Галичанин КС-65713-1	1
5	Աշտարակային կրունկ	Liebherr - 132	4
6	Աշտարակային կրունկ	Terex CTT 91 - 5 TS12	2
7	Աշտարակային կրունկ	KB - 403	2
8	Տոփանիչ	CR 3/60	6
9	Գույքային կադապարամած	կոմպլ.	6
10	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	6
11	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	6
12	Փոխարկիչ թրթրիչների համար	ИБ-4	6
13	Եռակցման տրանսֆորմատոր	СТН-500	6
14	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	6
15	Ձեռքի էլեկտրական դուր	ИЭ-1208Э	6
16	Հղկող մեքենա	ИЭ-2201	6
17	Թրթրազլղոն	HAMI 3410	1
18	Ավտոբետոնախատնիչ	СБ-69Б	հաշվարկով
19	Ավտոբետոնատար	КрАЗ-65055	հաշվարկով
20	Ինքնաթափ ավտոմոբիլ	МАЗ-5550	հաշվարկով

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

1.3.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է տարեկան մեկ մարդու հաշվարկով 70 կգ $150 \times 5.8 \times 74 / 1000 = 64.38$ տ եւ շինարարական աղբն է 1480 խմ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

- a) **Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 8 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 142 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 2220 օր

$$W_{\text{խ.տ.}} = (8 \times 0.016 + 142 \times 0.025) \times 2220 = 8168 \text{ խմ/շին. ժամ.}:$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 1000 քմ,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 2220

$$U_1 = 1000 \times 0.0015 \times 2220 = 3330 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 11498 խմ/շին. ժամ:

Բազմաբնակարան բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել $d=250$ մմ Գալշոյան փողոցով անցնող ջրատարից, իսկ կոյուղին հնարավոր է միացնել Դավիթ-Բեկի փողոցով անցնող $d=400$ մմ կոյուղատարին (Կոյուղին կանցկացվի համաձայն տեխնիկական պայմանի՝ երկշերտ, ծալքավոր լայնուկավոր կոյուղու խողովակով՝ PEHD SN8 OD160/140- OD340/300, L=635մ), հեղեղատարը՝ Միկոյան փողոցով անցնող $d=300$ մմ հեղեղատարին:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Երևան քաղաքի տեխնիկական ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով պայմանագրային հիմունքներով: Բիոզուգարանի աշխատանքը հիմնված է բիոլոգիական ակտիվ հեղուկի ազդեցությամբ, որը քայքայում է թափոնները, վերացնում է միկրոբներին և չեզոքացնում հոտերը: Բիոզուգարանները սպասարկվում են այն ընկերության կողմից, որը մատակարարել է բիոզուգարանները:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 4.540 ԿՎԱ հզորությամբ կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Կկառուցվի ՏԵ համապատասխան հզորության

տրանսֆորմատորներով, որի 10.0կՎ էլեկտրասնունմն իրականացնել ԵԵ ԱՆԻ10կվ 1-ին, 2-րդ հատոններից:

Գազամատակարարումը 2000 խմ/ժամ ծախսով համաձայն տեխնիկական պայմանի կիրականացվի Ջրվեժ ԳԲԿ սնող 300մմ կողմնատար գազատարի 0.05 կմ-ից:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հետազոտվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի, Նոր Նորք վարչական շրջան Ա. Միկոյան 9/3 հասցեում և իրենից ներկայացնում է մասնակի կառուցապատված տարածք:

Հողամասում առկա է քանդման ենթակա սպասարկման սրահ 660.1քմ, օժանդակ շինություն 310.8քմ, էլ. ենթակայան 51.3քմ, պահակակետ 7.2քմ, պարիսպ 21.81քմ, ծածկ 228.1 քմ մակերեսով: Կից գտնվում են բազմաբնակարան բնակելի շենքեր: Հողամասի հարևանությամբ է Գալշոյան փ. վրա գտնվող Սբ. Սարգիս եկեղեցին պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում ներառված չէ, և պահպանման գոտու սահմաններ նախատեսված չեն:

Ժողովրդագրական կազմ ու բնակչություն

Երևան, քաղաք տեղակայված է Հրազդան գետի երկու ափերին: Հանդիսանում է պետության մայրաքաղաքն ու խոշորագույն բնակավայրը, վարչաքաղաքական, տնտեսական կենտրոնը: Համաձայն Հայաստանի պաշտոնական տեղեկատվության՝ 2014 թվականի հունվարի մեկի դրությամբ ունի 1.068.000 բնակիչ: Բնակչությունը աշխատում է արտադրական, էներգետիկ և այլ օբյեկտներում: Իրականացվում են մեծ ծավալի քաղաքաշինական ծրագրեր:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի արևելյան եզրամասում, Նորքի հրաբխային սարավանդի բարձրադիր կենտրոնական մասում, իրենից ներկայացնում է դելյուվիալ լանջի մի հատված որտեղ ռելիեֆը թեք է՝ արևելքից դեպի արևմուտք անկումով և որտեղ ռելիեֆի պայմանական նիշերը տատանվում են 160-183 մետրերի սահմաններում:

Հիդրոերկրաբանական պայմանները Տեղամասում մինչև 25 մետր խորությամբ փորված հորատանցքերով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ մեր ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

Տարածքի մոտեցումներն ապահովված են Միկոյան փողոցից:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում առկա է 10-40սմ հզորությամբ հողաբուսաշերտ:

Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան:
Ծառաթուփային բուսականությունը բացակայում է:

Նոր Նորք վարչական շրջանում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ

հուշարձան	կառուցված	հավելյալ նշումներ
Բացօթյա կայան Նոր Նորք-1	քարի դար	Գետառի կիրճի ձախ ափին, թեք լանջին
Բացօթյա կայան Նոր Նորք-2	միջին քարի դար	4-րդ բնակելի զանգվածի մոտ, , Տորք Անգեղ 1970 թ.
Բացօթյա կայան Նոր Նորք-3	միջին քարի դար	Գետառի ձախ ափին. հիվանդանոցի մոտ, հայտնաբերված 1970 թ.
Բացօթյա կայան Նոր Նորք-4	հին քարի դար	Ռադիո-տեխնիկայի ուսումնարանի դիմաց, հայտնաբերված 1970 թ.
Բացօթյա կայան Նոր Նորք-5	քարի դար	հայտնաբերված 1971 թ.
Բացօթյա կայան Նոր Նորք-6	քարի դար	Գետառի ձորի բլրալանջին, հայտնաբերված` 1973 թ.
Բացօթյա կայան Նոր Նորք-7	հին քարի դար	հայտնաբերված` 1971 թ.
Բացօթյա կայան Ջրվեժ-1	նոր քարի դար	Նոր Նորքի 4-րդ զանգվածի հարևանությամբ, հայտնաբերված` 1972 թ.
Բացօթյա կայան Ջրվեժ-2	մեզոլիթ	խաղողի այգու եզրին, Ջրվեժ-1 բացօթյա կայանից 250 մ հեռու, հայտնաբերված` 1973 թ.
Բերդշեն Աղվեսաբերդ	մ.թ.ա. 2-1 հզ, 2-4 դդ., 9-11 դդ.	քաղաքային հիվանդանոցի ծննդատան մասնաշենքի տակ և նրանից ամ
Ժայռապատկերներ	մ.թ.ա. 2 հզ	տեղափոխված` Սիսիանի շրջ Ուղտասար վայրից
Հուշադրյուր Մայիսյան ապստամբության հերոսների գնդակահարման տեղում	1972 թ.	ճարտ.՝ Ռ. Իսրայելյան, Կենդանաբանական այգու դիմաց
Հուշարձան Գայի Հայկ Բժշկյանց	1977 թ.	ճարտ.՝ Ս. Գուրգադյան, քանդ.՝ Ս. Նազարյան, Նոր Նորքի 1-ին բնակելի զանգվածում
Հուշարձան՝, Տորք Անգեղ	1982 թ.	քանդ.՝ Կ. Նուրիջանյան
Հուշարձան՝ Հայկ Նահապետի	1972 թ.	քանդ.՝ Կ. Նուրիջանյան
Ջրանցք՝ Աղվեսաբերդի	ուշ մշնդ	հայտնաբերվել է 1988 թ. Հ. Սիմոնյանի կողմից
Վիշապաքար	մ.թ.ա. 2 հզ	տեղափոխված` Գեղամա լեռներից
Վիշապաքար	մ.թ.ա. 2 հզ	տեղափոխված Գեղամա լեռներից

հուշարձան	կառուցված	հավելյալ նշումներ
Տապանաքար	16 դ.	ձիակերպ, տեղափոխված 1970-ական թթ.՝ Սիսիանի շրջ. Բասարչայ գյուղի մոտ գտնվող գյուղատեղիից
Տապանաքար	16 դ.	ձիակերպ, տեղափոխված 1970-ական թթ. Սիսիանի շրջ. Բասարչայ գյուղի մոտ գտնվող գյուղատեղիից
Տապանաքար	16 դ.	խոյակերպ
Տապանաքար	16 դ.	խոյակերպ, տեղափոխված 1970-ական թթ. Աշտարակի շրջ. Արուճ գյուղի մոտ գտնվող գերեզմանոցից
Տապանաքար	16 դ.	խոյակերպ, տեղափոխված 1970-ական թթ. Աշտարակի շրջ. Ավան գյուղի շրջակայքից
Տապանաքար	16 դ.	խոյակերպ, տեղափոխված 1970-ական թթ. Աշտարակի շրջ. Արուճ գյուղի մոտ գտնվող գերեզմանոցից
Քանդակ , Մայրություն	1975 թ.	քանդ.՝ Հ. Սիմոնյան , պողոտայով ձգվող բացօթյա ցուցադրության շարքում

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հոդմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

2.2 ԿԼԻՄԱՆ

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -30°C , բացարձակ մաքսիմումը հասնում է $+42^{\circ}\text{C}$: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների համաձայն:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութա- բանական կայան	Օդերևութա- բանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	1113	-2.9	-0.8	5,1	11.8	16.3	20.8	24,5	24.2	19.9	13,1	6.4	0.1	11,5	-21	41

Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութա- բանական կայան	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
														հունվարին	օգոստոսին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների												Տարեկան	Ձնածածկույթ		
	Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Առավելագույն տասնօրյակա-յին բարձրությունը,սմ	Տարվա մեջ ձնածածկությոժով օրերի քանակը	Չյան մեջ ջրի Առավելա-գույն քանակը,մմ
	Ըստ ամիսների															
	28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28				
													353			
Երևան	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47	50	53	152

Աղյուսակ 2.4 Քամի

Բնակավայր, օդերևույթաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնճում, (հ Պա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղությունների Միջին արագություն, մ/վ								Անհողմությունների հազար մետր 50%	Միջին ամսական մետր 50%	Միջին տարեկան մետր 50%	Ուժեղ քամիներով մետր 50%	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
			Հյուսիսայն (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրմ)	Հարավ (Ավ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
Երևան «Արաբկիր»	889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0,9	2,0	30	20	23	25
			1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9							
		ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2,1					
			3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5							
		հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3,4					
			6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6							
		հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1,8					
			2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0							

2.3 Օդային ավազան


Երևան քաղաքում գործում է 45 դիտակետ և 5 դիտակայան: Որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Փոշու որոշ փորձանմուշներում որոշվել են մետաղների պարունակությունը, որոնց ամսական և տարեկան միջին կոնցենտրացիաները բերված են գրաֆիկների տեսքով:

2021թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտի աղտոտող 4 նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը* (ՄԱՅ) 2.14 է (փոշի՝ 1.15, ծծմբի երկօքսիդ՝ 0.34, ազոտի երկօքսիդ՝ 0.61, գետնամերձ օզոն՝ 0.05):


Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է ծծմբի երկօքսիդի և գետնամերձ օզոնի կոնցենտրացիաների նվազման, իսկ փոշու և ազոտի երկօքսիդի՝ աճման տենդենց:

2021 թվականին Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշներից փոշու միջին տարեկան կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՄԹԿ-ն 1.1 անգամ: Մնացած ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները: Իրականացված դիտարկումների 29%-ում դիտվել են փոշու, 13%-ում՝ ծծմբի երկօքսիդի, 0.4%-ում՝ ազոտի երկօքսիդի, 1%-ում՝ գետնամերձ օզոնի համապատասխան ՄԹԿ-ներից գերազանցումներ, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:


Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Գծապատկեր 1. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 2. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմրի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 3. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 4. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

2.4 Ջրային ռեսուրսներ

«Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես պարբերական մոնիթորինգի է ենթարկվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի տվյալները ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում: Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Քասախ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում դեկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Հրազդան գետի ջրի որակը Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում դեկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում դեկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

2.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2.6 Հիմնային աշխատանքներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 190000 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ Հանվող 160000 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Հանույթը կարճաժամկետ կպահվի շինհրապարակում, պարբերաբար կիրականացվի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով:

2.7 Կենսաբազմազանություն

Բուսական աշխարհ: Նախատեսվող գործունեության տարածքը բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Երեւանի ֆլորիստիկ շրջանին, որին սովորաբար յուրահատուկ են կիսաանապատային եւ անապատային բուսածածկույթը, տարածքի հարեւանությամբ հանդիպող սակավ բուսատեսակները հիմնականում քսերոֆիտներ (չորասերներ) են: Ընդհանուր առմամբ, Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, քսերոֆիտ, օշինդրային կիսաանապատների բուսածածկ ոչ բնակելի, ոչ արտադրական, բնական բուսածածկով տարածքներում կարող է աչքի ընկնել տեսակային հարուստ բազմազանությամբ: Որպես կանոն, այս տեսակները տարածված են ոչ աղակալված, մակերեսային քարքարոտ գորշ հողերի վրա եւ ներկայացված են օշինդրաէֆեմերային-կիսաանապատային եւ հալոֆիլ-անապատային տիպերով: Օշինդրային կիսաանապատների հիմնական բաղադրիչը օշինդր բուրավետն է (*Artemisia fragrans*), որը մինչեւ 50 սմ բարձրության, փայտացած առանցքով կիսաթփիկ է: Այն զարնանը եւ ամռանը պահպանում է իր մոխրագույն տեսքը, աշնանը ծածկվում է մանր դեղին ծաղիկներով: Գարնանը այդ թփերի միջ եւ ընկած տարածությունը զբաղեցնում են էֆեմերները՝ *Ceratocephalus falcatus*, *Ziziphora tenuifolia*, *Ziziphora persica*, *Alyssum desertorum*, *Poa bulbosa*, *Bromus tectorum*, *Lepidium vesicarium* տեսակներով: Հունիսի կեսերին, տեղումների քանակին նվազեցման եւ օդի ջերմաստիճանի բարձրացման հետ այս տեսակները չորանում են: Սակայն աշնանը տեղումների ավելացման հետ մեկտեղ օշինդրային անապատները վերակենդանանում են, ծաղկում են՝ օշինդրը (*Artemisia*), *Kochia prostrata*, *Noaea mucronata* եւ այլ բուսատեսակներ: Ուշ աշնանը եւ ձմռանը հողը ծածկվում է աճող էֆեմերների կանաչ գորգով: Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ *Acorus calamus* L. (Խնկեղեգճահճային), *Lepidium lyratum* L. (Նվարդակքնարածեւ), *Salsola tamamschjanae* Iljin (Օշան Թամամշյանի), *Astragalus paradoxus* Bunge (Գազտար օրինակ), *Glycyrrhiza echinata* L. (Մատուտակ խոզանավոր), *Rhizocephalus orientalis* Boiss. (Արմատագլխիկ արեւելյան): Նշված բուսատեսակները հանդիպում են Երեւանի ֆլորիստիկ շրջանում, սակայն ծրագրի համար նախատեսված տարածքներում տարածման արեւալներ չունեն: Նախնական ուսումնասիրությունների եւ գրականական տվյալների նույնականացման

արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր չեն հայտնաբերվել:

Կենդանական աշխարհ: Նախատեսվող գործունեության հարակից տարածքներին էլ ընդհանուր լանդշաֆտային գոտուն բնորոշ կաթնասունների տեսակային կազմից ամենուրեք հանդիպում են՝ *Microtus arvalis* Pall. (դաշտամուկ), մի քանի տեսակ չղջիկներ՝ *Nyctalus noctula* (շեկիրիկնաչղջիկը), *Vespertilio ognevi* (Օգնեւիմաշկեղը), միջատակերներ (*Hemiechinus auritus*, *Mustela nivalis*): Անողնաշար կենդանատեսակներից տարածաշրջանում հանդիպում են՝ *Phytodrymadusa armeniaca* (ծղրիղներ), *Nocarodes armenus* (մորեխներ), *Amphicoma eichleri*, *Cantharis araxicola* (բզեզներ), *Zodarion petrobium* (սարդեր): Կարիճներից հանդիպում է միայն *Buttus caucasicus*-ը: Նախատեսվող գործունեության իրականացման տարածից դուրս բնական, տնտեսական գործունեության մեջին տեսիվ ներգրավվածություն չունեցող տարածքներում Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներից կաթնասուններից կարող են հանդիպել *Rhinolophus Mehelyi* (Մեհելիի պայտաքիթ), (*Barbastella leucomelas*), Ասիական լայնականջ չղջիկ, (*Miniopterus schreibersi*) Սովորական երկարաթև չղջիկ: Թռչուններից՝ (*Circaetus galicus galicus*) Եվրոպական օձակերը, (*Merops superciliosus persicus*) Պարսկական կանաչ մեղվակերը, (*Sylvia nisoria nisoria*) Եվրոպական ճուռական մանշահրիկը, (*Luscinia svecica occidentalis*), Իրանական կապտափողը, (*Remiz pendulinus menzbieri*) Իրանական սովորական ճոճհավը եւ այլն, սողուններից՝ (*Eumeces schneideri*) Երկարաթև սցնիկը, (*Mabuya aurata*) Ոսկեգույն մաքույա, (*Elaphe hohonaekeri*) Անդրկովկասյան սահնօձ:

2.8 Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 64.38 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 1480 խմ շինարարական աղբը(քար, բետոն, երկաթի ջարդոն և այլն:) /ծածակագիրը՝

9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում,
- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NO_x):

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզաբան: Անձրևաջրերի նստեցման պարզաբանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի

բնապահպանության վարչության համաձայնեցմանը: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 14858 քմ:

- Տարածքում առկա հողի բերրի շերտը՝ մոտ 9200 խմ կօգտագործվի տարածքի կանաչապատման և աբարեկարգման աշխատանքների ընթացքում:
- Տարածքում նախատեսվում է տնկել թույա, ֆլորսիցիլիա, հենոմելեա, սիրիական հիբիսկուս, ճապկի – 492 հատ, դեկորատիվ ծառեր թխկի – 200հատ, ծաղկանոց – 522քմ, ճիւղ, սիզամարգ:
- Տարածքում առկա հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ 1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.
 - Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
 - Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
 - Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:
 - Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել **2** տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոեղանակներով:
 - Լայնակույտերը տեղադրվում տարածքում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:
- Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին փուլի շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 35 ամիս, նշված հարցը կհստակեցվի մոտ 3 տարի հետո:

3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

- գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
 - բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
 - Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների:
 - Անվտանգության նկատառումներից ելնելով շինհրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:
 - իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 4905000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեզոլյացումը կանխելու նպատակով	700000	700000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	74x45000	3330000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	25x35000	875000
Ամբողջ շինարարության համար		4905000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուին պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: (d) Շինարարության ընթացքում համաձայն մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի, փոշեգոյացումը կանխելու նպատակով շենքերը կծածկվեն անթափանց թաղանթով
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	Թափոնների կառավարում	(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեմներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոգուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարանջատված: (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի: (c) Շինհրապարակից ելքի ժամանակ լվացվում են տեխնիկական միջոցների անվաղողերը: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:

Արտակարգ իրավիճակների կառավարում	Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում	- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:
---	--	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում - հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին զննում	մշտական	Կապալառու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1.** СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
- 2.** Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
- 3.** Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ


ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 01/18-04/2-40120-318

«29» «04» 2022թ.

Օբյեկտ	Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր (բարձր ռիսկայնության օբյեկտ, IV կարգերի)
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն, հակիրճ բնորոշում, հղորդություն, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան))	
Մեկ փուլով՝ «Աշխարհաբնային նախագիծ» կամ երկու փուլով՝ «Նախագիծ» և «Աշխարհաբնային փաստաթղթեր»	Նախագծային փաստաթղթերի մշակման համար
(նախագծման փուլերը և այլն)	
Գտնվելու վայրը	Նոր-Նորք վարչական շրջան, Միկոյան փողոց հ.9/3
(վարչական շրջանի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծավալները)	
Կառուցապատող	«ՎԵԼԼԻ ԲԵՅ» ՍՊ ընկերություն
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)	
Առաջարկարների տրամադրման հիմքը	Կառուցապատողի հայրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.29112021-01-0413 վկայականը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 28.09.2021թ. հ.01/11.1/8823-2021 գրությունը, 24.03.2022թ. տրամադրված հ.01/18-07/2-33747-197 նախագծման թույլտվությունը և էքսիզային նախագիծը:
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրության սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)	
ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԵՆՈՒԹԱԳԻՐԸ	
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ փնտալով՝ Մ 1:500)	
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, ՀՀ կառավարության 29.12.2011թ. N1920-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ հողամասի գործառնական նշանակությունը փոփոխվում է բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, կադաստրային ծածկագիրը՝ 01-008-0103-0126:	
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)	
1. Հողամասը գտնվում է	
2. (*) Հողամասի չափերը	3.683053 հա:
(հողամասի սահմանները՝ կորդինատային նշանարձան, մակերեսը (հա))	
3. Հողամասի առկա վիճակը	Հողամասում առկա են քանդակման ենթակա հասարակական և օժանդակ շինություններ:
(ոչինչի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդակման ենթակա) ամրությունը (զգուսգործում, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատման, բարեկարգումը և այլն)	
4. (*) Տրանսպորտ. պայմ.	Միկոյան փողոց:
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)	
5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Կից գործող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ:
(ցրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգը)	
(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)	
6. (*) Կից հողամասեր	Միկոյան փողոց, կառուցապատումից ազատ և բազմագործառնային շենք-շինություններով ծանրաբեռնված հողամասեր:
(կից հողագործողների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված փնտալի)	
7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)	-----
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)	
8. (*) Հատակագծային սահմանափակումներ	-----
(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ տեղափոխություններ)	
ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԼԱՆՔՆԵՐԸ	
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ փնտալով՝ Մ 1:500)	
9. Ճարտարապետահատակագծային պահանջներ	Մշակել բնակելի և հասարակական մասնաշենքերից բաղկացած բազմաֆունկցիոնալ համալիրի նախագիծ հ.29112021-01-0413 վկայականով ամրագրված հողամասի սահմաններում:
(եղանակը ՀՀ օրենսդրության և նորմատիվադատական փաստաթղթերի պահանջներին, առկա քաղաքաշինական նշանակության փաստաթղթերի դրույթներին կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմակերպող (կազմակերպող) քաղաքաշինական միջավայրի պահանջներին, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, պատուհանների, պատուհանների համամասնությունների և գտնային լուծումների վերաբերյալ)	
9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)	-----
9.2. (*) հեռավորությունը հարևան հողատիրոջից (օբյեկտներից) (մետր)	Հարակից հողամասերից, շենք-շինություններից և միմյանցից կառույցների հեռավորությունը նախատեսվել է գործող նորմատիվային պահանջների համաձայն:
9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)	Հողամասի արևելյան հատվածում տեղակայվող թվով 5 կետային բնակելի մասնաշենքերը նախատեսվել են մինչև 16 հարկ, իսկ արևմտյան հատվածում տեղակայվող բնակելի մասնաշենքերը՝ 10-ից 13 հարկ (ապրիլհանձնի հորինվածքով): Բնակելի հարկերի բարձրությունը հարկից հարկ ընդունել 3.30մ: Հողամասի կենտրոնական հատվածում նախատեսվող մարզական մասնաշենքի բարձրությունը՝ տեղակայման սյուրիի նիշի նկատմամբ, նախատեսվել է մինչև 21.0 մ: Հողամասի ռեյինֆային առանձնահատկություններից ելնելով՝ հնարավոր են սպորտգեղարվեստի հարկեր: Բնակելի մասնաշենքերում հնարավոր են մասնակի բարձր ծավալներ՝ տանիքը սպասարկող ասֆալտաբետոնապատվարների, վերելակների հորանների և տեխնիկական սենքերի համար:
9.4. կառուցապատման խտության գործակիցը	-----
(կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)	
9.5. կառուցապատման տոկոսը	Մինչև 40%, ճանապարհների, սալվածքների և անցուղիների համար մինչև 20%:
(կառուցապատվող (անցուղիների) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)	
9.6. կանաչապատման տոկոսը	40% և ավելի:
(կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)	
9.7. այլ պահանջներ	- ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման Հավելվածի N1-ի 87-րդ կետի և սույն թույլտվության 23-րդ կետի համաձայն՝ էքսիզային նախագիծ միջանկյալ համաձայնեցման փուլում անհրաժեշտ է ապահովել կառույցի եռաչափ տեսքի տեղակայումը տարածական միջավայրում: - Համալիրի կազմում՝ Ա. Միկոյան փողոցին հարող կետային մասնաշենքերի միջանկյալ հատվածում, հնարավոր է նախատեսել թվով 2 միահարկ հասարակական սպասարկման կառույցներ: - Նախագծով ապահովել հարակից տարածքների շահագործման նորմատիվային պահանջները: - Հարակից գոտիների լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջարկների՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները: - Կենտրոնացված օդափոխության համակարգ չնախատեսվելու դեպքում, կառույցի արտաքին տեսքը և ճարտարապետական հորինվածքը հետագա խաղաղության դեպքում պահելու համար, նախատեսվել է ընդարկված համակարգ՝ տեղային օդափոխիչների տեղադրման համար: - Համալիրի տարածքում հնարավոր է նախատեսել պատվար և ակտիվ հանգստի գոտիներ՝ խաղահրապարակներ, մարզադաշտ, լողաձազան ինչպես նաև թաղամասի սպասարկման համար անհրաժեշտ այլ հասարակական և օժանդակ շինություններ: - Հողամասի տրանսպորտային մոտեցումները նախապես համաձայնեցնել ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայության հետ: - Կառույցում նախատեսվել է հասարակական նշանակության տարածքների սպասարկման համար անհրաժեշտ առանձնացված ինժեներական հորաններ, բացառելով հետագայում արտաքին ճակատների օդափոխիչի անցկացումը:

• Նախագծով լուծել ավտոտրանսպորտի անվտանգ ելուժուրի և բացօթյա ավտոկայանման խնդիրները: • Տանիքները նախատեսել կազմակերպված ջրահեռացմամբ:	
10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման պայմանները և աշխատանքների հերթականությունը	Անշարժ գույքի նկարագրում իրավունքների պետական գրանցման հ.29112021-01-0413 վկայականով ամրագրված բոլոր շենք-շինությունները
11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները	Համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ ապահովելով բնակարանների թվաքանակի առնվազն 70%-80%-ին համապատասխան ավտոկայանատեղեր:
12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Նախագծի ինժեներական մասը մշակել իրավասու կազմակերպությունների կողմից նախկինում տրամադրած տեխնիկական պայմաններին համաձայն:
12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում	----- (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.2. (*) էլեկտրամատակարարում	----- (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	----- (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատա կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադրիքը	----- (համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	-----
12.6. արքահանություն	-----
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	Կազմակերպել ջրահեռացում: (ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում	Մշակել տարածքի բարեկարգման, կանաչապատման և ուղղաձիգ հատկագծման նախագիծ, հնարավոր է նախատեսել ճարտարապետական փորձ ձևեր: (անշարժ գույքի պահպանման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փորձ ձևեր, ցանկապատում, գրվազը և այլն)
15. Շինարարական նյութեր	Երկաթբետոն, սրբաքար և կոպրաքար թար, փայտ, մեղաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր: (շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ	----- (արտակարգ իրավիճակներում մարդկանց, օբյեկտների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներ	Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները, ապահովել հրդեհ խիդրանտների առկայությունը: (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)
18. Համանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	Նախատեսել համանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններ: ՀՀԵՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմին համապատասխան:
19. Շրջակա միջավայրի պահպանում	• Նախատեսել շրջակա միջավայրը վրանգավոր ազդեցությունից բացառելու համապատասխան միջոցառումներ: • Ապահովել մթնոլորտային օդի, ջրի, բնահողի, ինչպես նաև աղմուկի, թթվոտների, էլեկտրամագնիսական ճառագայթմանը և այլ բնական և տեխնոլոգիական ծագման գործոնների սահմանափակ կանոններով և նորմերով, շինարարական նորմերով ներկայացվող նորմատիվ պահանջները: (շրջակա միջավայրը վրանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)
20. Շինարարության կազմակերպում	Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկարի ունենալով Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները: 111. Նոր կառուցվող շենքերի, շինությունների համար շինարարության թույլտվությունը տրվում է 2 տարի ժամկետով, եթե տվյալ օբյեկտի շինարարության համար քաղաքաշինության բնագավառի պետական փազրկված մարմնի ՄԻՊԻ 1.04.03.85՝ (Շինարարության) շենքերի և կառուցվածքների շինարարության տնտեսության ներքին գերատեսչական ակտիվ սահմանված նորմերով այլ ժամկետներ նախատեսված չեն: 112. Պրոյեկտի ունենող շենքերի և շինությունների վրաստատության ներառյալ՝ բաղնիքի, վերակառուցման, ուղղորդման և բարելավման աշխատանքների համար թույլտվությունը տրվում է նախագծային փաստաթղթերով տվյալ օբյեկտի շինարարության լուծման կամ ապամոնտաժման) տնտեսության ներքին հաշվառված ժամկետով: (առաջարկությունները շինարարության հետ կապված անարժեքատու ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անվտանգ աշխատանքի ապահովման վերաբերյալ)
21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	Երեք տարի, Հնարավոր է մասնաշենքերի փուլային համաձայնեցում: (նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)
Լ Ր Ա Ց ՈՒ Ց Ի Չ Պ Ա Ց Մ Ա Ն Ն Ե Ր Ը	
22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման հավելված N2-ի համաձայն՝ պետական համայնի փորձաքննություն, իսկ 1500քմ և ավելի կառուցապատման մակերեսի դեպքում՝ նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն: (ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)
23. Միջանկյալ համաձայնեցում	• Էսքիզային նախագծի միջանկյալ համաձայնեցում Երևանի քաղաքապետարանի հետ: • ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ: (իրավասու մարմնի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շահագրգիռ մարմինների հետ Էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով սահմանված դեպքերում) ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ:
24. Հասարակական քննարկումներ	----- (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)
25. Համաձայնեցումներ	• Երևանի քաղաքապետի հետ: • Մինչև նախագծային աշխատանքները սկսելը առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ: (նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ փազրկված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)
26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում	Բնակարանների՝ սպասարկման համար առաջին հարկում նախատեսել բաժանորդային փոստարկղերի տեղադրման համար համապատասխան տարածքներ:
27. Այլ պայմաններ	Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արդարական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու մասին» հ. 128-Ն հրամանով հաստատված դրույթներին:


 ստորագրությունը
 Կ. Տ.

Երևանի քաղաքապետ՝
 ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ


Կապարող՝ Շ. Մալխասյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 29 նոյեմբերի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՎԵԼԼԻ ԲԵՅ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Նոր-Նորք Ա. Միկոյան փողոց 9/3

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ Կառավարությանն առընթ. պետ.ունեցվածքների հաշվառման և սպասարկման վարչության 03.04.1995 թիվ 550 սեփականաշնորհման պայմ., Երևանի գործկոմի 22.12.1995թ.թիվ 48/15, Երևանի քաղաքապետի 30.10.2006թ. հ. 1752-Ա որոշում, ճարտարապետահատակագծային առաջադրանք 05.04.20122. հ. 01/18-07/2-11348-237, 20.07.2012թ. N 01/18-07/2-33342-679, շինարարության թույլտվություն 31.08.2012թ. N01/18-40917-832, ճարտարապետաշինարարական նախագիծ 03.05.2012թ. հ. 01/18-05/2-19607-337 շինարարության շահագումման փաստագրման ակտ 04.09.2013թ. հ. 01/19-13/51372-470, 21.11.2021թ. թիվ 002223 հողի կադաստրային արժեքի վճարի անդորրագիր:

ՎԿԱՅԱԿԱՆ N 29112021-01-0413, գաղտնաբառ՝ BC3LTTS6ARGA

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-008-0103-0126

Մակերեսի չափը (հա)՝ 3.683053

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-008-0103-0126-001-000	Սպասարկման սրահ	660.1 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	01-008-0103-0126-002	Օժանդակ շինություն	310.8 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	01-008-0103-0126-003	Էլ. ենթակայան	51.3 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	01-008-0103-0126-004	Պահակակետ	7.2 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5	01-008-0103-0126-003	պարիսպ	21.81 քմ, 32.72 խ.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6	01-008-0103-0126-001	ծածկ	125.3 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
7	01-008-0103-0126-002	ծածկ	102.8 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ


Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՄԱՐՏԻՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Ձբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 29112021-01-0413, գաղտնաբառ՝ BC3LTTS6ARGA

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

ԷԼԵԿՏՐԱՄԱՍԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԵՐ՝ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ, ՄԴԱՅՄԱՆ ՊԵՏՐՈՒՄ

1.	Նույնացման կոդ	75967111	Ընտրություն 154/154, 2022			
2.	Ցանց	ՆՈՒՆՈՒՄ	Բաժանմունք	ԷԼԵԿՏՐԱԿԱՆ		
3.	Պատվիրատուի տվյալներ	Հեռախոս 37499 2140578	Կարգավիճակ	Առևտրային սպառող		
			Անվանում	ՎԱՅԷԲ ԲՆՃ ԲԴԸ		
			Անձնագիր	AT0691463, 009 3/9/2021		
			Սոց. քաղաք			
			Ղեկավար	ԱՐԲՈՒՄ ՄԴԱՅՄԱՆ		
4.	Էլեկտրասնուցման տարածքի հասցեն		ՀՀ ԵՐԵՎԱՆ, Բ. ԵՐԵՎԱՆԻ, ԱՐՏԱՐ ԿՐԻՍՏՈՍԻԱՆԻ փող. 9/3			
5.	Միացման տեսակ	Եռաֆազ	6.	Համայնք	ՆՈՒՆՈՒՄ	
7.	Պահանջվող հզորություն (ԿՎԱ)	4.540	8.	Սնուցման տեսակ	Բաղնախնայարանային ձևեր	
9.	Լարման մակարդակ (ԿՎ)	0.40	10.	Միացման ամսաթիվ		
11.	Էլեկտրամատակարարման իրականացման տեխնիկական պայմանների առաջարկ					
Կատարել ՏԵ՝ համապատասխան հզորության տրանսֆորմատորներով, որի 10.0 կՎ Էլեկտրասնուցման իրականացման ԿՎԱՆ Ե՝ 10.0 կՎ 1-ին, 2-րդ հատվածներին նախապես վերանորոգելով 2 հատ ԿՈՕ-272 տիպի լարերով: Բաղնախնայարանային ձևերով Էլեկտրասնուցման իրականացման նոր կատարվող ՏԵ՝-ի 0.4 կՎ 1-ին, 2-րդ հատվածներին համապատասխան կարվածքի հաղորդման գծերով: Հաշվարկային սարքերը տեղադրել սահմանազանման կետում: Անվտանգության գոտին խախտված չէ:						
Անհրաժեշտ փաստաթղթերը ստուգել և պատվերն ընդունել  / Ե. ՔԱՐՈՍՅԱՆ						
Տեխնիկական պայմանների առաջարկին համաձայն եմ, ծանոթ եմ Նոր ապրանքի՝ կամ ապրանքի վերականգնվող սպառման համաձայն Էլեկտրական ցանցին միացման կարգին, որի համար ստորագրում եմ						
/ ԱՐԲՈՒՄ ՄԴԱՅՄԱՆ						
Էլեկտրասնուցման վերականգնվող գծի գույքահամար և անվանում						
12.	00590053	6.0 կՎ մալուխային գիծ				
Էլեկտրասնուցման կատարվող գծին արվող						
13.	Գույքահամար	Անվանում	Տեսակ	Կազմակերպ խմբի կոդ	Հատիկ	ԿՎ
Հաստատել մասնաճյուղի կողմից ներկայացված տեխնիկական պայմանի առաջարկը Պատվիրել անհրաժեշտ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը Մերժել ներկայացված առաջարկը Մերժման պատճառները Ներկայացնել նոր առաջարկ						

ՀԵՏ>> ՓԲԸ

/ Ե. ՇԻՆԿԱՆՆԱՅԵՅԱՆ

Հաստատել մասնաճյուղի կողմից ներկայացված տեխնիկական պայմանի առաջարկը
Պատվիրել անհրաժեշտ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
Մերժել ներկայացված առաջարկը
Մերժման պատճառները
Ներկայացնել նոր առաջարկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՓԲԸ

/ Ե. ՇԻՆԿԱՆՆԱՅԵՅԱՆ



Զուր



Տեխնիկական պայման ՎՋ /666 /2022

(Ջրամիացման և/կամ/ ջրահեռացման, նախագծման)

Ք.Երևան, Նոր Նորք, Միկոյան փողոց 9/3


/Տարածքի հասցե/

«Վեյլի Բեյ» ՍՊԸ

/անուն, ազգանուն/

091432122

/Հեռախոսահամար/



Համակարգ	Ջրամատակարարում	Ջրահեռացում	Հրդեհաշիջում	Հեղեղատար
Կոմունիկացիայի գտնվելու վայրը	Գալշոյան փողոց	Դավիթ Բեկի փողոց		Միկոյան փողոց
Գործող խողովակի տրամագիծը, ճնշումը, տեսակը	d=250մմ, P=2.5մթն.պող	d=400մմ		d=300մմ
Միացման կետը	Գալշոյան փողոցով անցնող ջրագծից	Դավիթ Բեկի փողոցը հատող կոյուղատարին		Միկոյան փողոցով անցնող հեղեղատարին
Միացման տրամագիծը	Համաձայն նախագծի			
Ջրաչափի տրամագիծը , դասը և տիպը				
Այլ պահանջներ	1.Ջրաչափական հանգույցի համար կառուցել դիտահոր 2.Նշված ջրագծից հնարվոր է տրամադրել առավելագույնը 5լ/վ ջրաքանակ	Կոյուղագծի միացման կետում կառուցել դիտահոր	Տես * կետը	Հեղեղատարի միացման կետում կառուցել դիտահոր
Ջրամատակարարման գրաֆիկը	շուրջօրյա			

Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, և դրանք համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ:

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը, դիմողի հայեցողությամբ, իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ դիմողի հաշվին: Կառուցված մեր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ դիմողի հաշվին:

Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի՝ զբաղեցման օրվանից սկսած: Այն ենթակա է երկարացման մինչև տեխնիկական պայմանի ժամկետի ավարտը՝ դիմողի կողմից ներկայացրած դիմումի հիման վրա:

Կառուցման ընթացքում, հողային աշխատանքներն իրականացնելիս, անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց թույլտվությունները և/կամ համաձայնությունները:

* Հրդեհաշիջումը նախատեսել համաձայն ՀՀԾՆ 40.01.02-2020թ. և ՀՀ Կառ. 08.08.2019թ թիվ 1025 որաշման, թիվ 29 հավելվածի, հիդրանտի տեղադրման դեպքում կառուցել դիտահոր:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ հասցեում կառուցվելու է բարձրահարկ շենք իսկ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ինքնահոս մատակարարվող ջրի ճնշումը 2.5 մթն. է, անհրաժեշտ է տեղադրել ինվերտորային պոմպ :

<< Հյուսիս>> տեղամասի պետ՝

Կ.Թորոսյան

Ինժեներական խմբի պատասխանատու՝

Գ. Վարդանյան

Կատարող՝ Գ.Վարդանյան

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ


«ՏՐԱՆՍԳԱԶ» ՍՊԸ

ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ-

ԳԵՄԱԳՈՐ ԶԱՐՏԱՐԱԳԵՏ

Հ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022թ.



Գ Ա Զ Ա Մ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ր Մ Ա Ն
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
(գազափոխադրման ցանցից)

թիվ. 85

08.04.2022թ.

Պատվիրատու՝ «Վելլի Բեյ» ՍՊԸ (տնօրեն՝ Ալբերտ Մինասյան)
(կազմակերպության անվանումը, ֆիզիկական անձի Ա.Ա.Հ.)

Տեխնիկական պայմանների տրամադրման հիմքերը – Պատվիրատուի ղիմումը:
(«Գազալարում Արմենիա» ՓԲԸ 07.04.2022թ. №Ն/53/9547-2022)
(ղիմումի գրանցման № և ամսաթիվը)

Շինարարության տեղը և հասցեն՝ ՀՀ ք.Երևան Լոր-Լորը վարչական շրջան, Ա. Միկոյան փողոց
թիվ 9/3:

Բնական գազի սպառման պահանջվող ծավալները 2 հազ. մ³/ժամ
(առավելագույն ժամային ծախսը)

Գազամատակարարման համար պահանջվող գազի ճնշումը 0.3 (3) ՄՊա (կգուծ/սմ²)
(գազի առավելագույն ճնշումը)

Միացման կետում գործող գազատարի (կամ ԳԲԿ-ի) անվանումը Զրվեժ ԳԲԿ-ն սնող D_ա-300մմ
տրամագծով կողմնատար- գազատար:
(մայրուղային գազատար, կողմնատար-գազատար, ԳԲԿ, այլ կազմակերպություններին պատկանող գազատարներ, ԳԲԿ-ներ)

Օբյեկտի շինարարության պլանավորված ժամանակահատվածը՝ սկիզբը – ավարտը –

Գազափոխադրման ցանցին միանալու տեխնիկական պայմանները՝

Ներմիացման կետ է հանդիսանում Զրվեժ ԳԲԿ-ն սնող D_ա-300մմ տրամագծով կողմնատար-
գազատարի մոտավորապես 0.05կմ:
(հանգույցի տեխնիկական բնութագրերը)

Գազի ճնշումները ներմիացման կետում:

- նախագծային 5.5 (55) ՄՊա (կգուծ/սմ²),
- փաստացի 1.1-2.5 (11-25) ՄՊա (կգուծ/սմ²)

Ներմիացման կետում խողովակի և մեկուսիչ շերտի տեխնիկական բնութագրերը պողպատե խողովակ D=325x5մմ, մեկուսիչ շերտը ժապավենային

Ներմիացման տեղանքային գծապատկերը

